ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.6. Ռուսաստանի Դաշնություն: Բնակչությունը

• • •

Առաջին, այն սերնդի ներկայացուցիչների փոքրաթիվությամբ, որոնք ծնվել էին 60-ականների վերջին և 70- ականների սկզբին՝ ժողովրդագրական անկման ժամանակ, ինչը պայմանավորված էր պատերազմով և ծնելիության պակասորդով:

Երկրորդ ժամանակակից ժողովրդագրական մոդելին անցնելու անավարտությունը, որին բնորոշ էին ցածր ծնելիությունը և ցածր մահացությունը:

Երրորդ կանանց ազատագրմամբ (գենդերային, սեռային հավասարություն) և տանից դուրս նոր արժեհամակարգի ստեղծմամբ. կրթական մակարդակի բարձրացում, երեխաների կրթության և դաստիարակության համար ծախսերի ավելացում, մանկական մահացության կրճատում:

Չորրորդ: Առավել կարևոր է սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը, որի արդյունքում նվազեց ծնելիությունը, աճեց մահացությունը, որն էլ հանգեցրեց կյանքի միջին տևողության կտրուկ նվազմանը. 2001թ տղամարդկանցը 58,6 տարի էր, կանանցը՝ 72,1 տարի:

• • •

Լամայականության տարածման շրջանները մեծապես համընկնում են ազգային փոքրամասնությունների բնակության շրջաններին: Ուղղափառություն են դավանում արևելասլավոնական և Ուրալյան լեզվաընտանիքի Ֆիննական ճյուղին պատկանող ժողովուրդները: Աշխարհագրորեն այն ներառում է ՌԴ գրեթե ամբողջ տարածքը: Իսլամ դավանում են Պովոլժիեում՝ թաթարներ, բաշկիրներ, չուվաշներ, կովկասյան շատ լեզուներով խոսող ժողովուրդներ Հյուսիսային Կովկասում: Բուդդայականություն են դավանում բուրյաթները, կալմիկները, տուվացիները: Կալմիկները բուդդայականություն դավանող միակ ժողովուրդն են Եվրոպայում:

• • •

Հայրենական պատերազմից հետո բռնի տեղահանվել են Հյուսիսային Կովկասի շատ ազգեր, ինչպես նաև կալմիկները, հույները, մասամբ՝ հայերը, որոնք հետագայում վերադարձել են հայրենիք: Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց մեծացավ ռուսների գաղթը դեպի ԽՍՀՄ այլ հանրապետություններ, այնտեղից էլ՝ այլ ազգերի ներկայացուցիչների (հատկապես Անդրկովկասից և Միջին Ասիայից) գաղթը դեպի ՌԴ: Խորհրդային միության փլուզմանը հաջորդած տարիներին սկսվեց ռեէմիգրացիա (հետգաղթ) հատկապես Անդրկովկասից և Միջին Ասիայից: 80–90 ական թվականներին հրեաների, հույների, գերմանացիների, ռուսների զանգվածային արտագաղթ տեղի ունեցավ դեպի ԱՄՆ, Իսրայել, Գերմանիա, Կանադա:

Ռուսաստանում դիտվում են նաև ներքին գաղթեր: Գաղթում են հատկապես երկրի Ասիական հատվածից և Եվրոպական հատվածի հյուսիսից դեպի Արևմտյան ու Կենտրոնական շրջանների խոշոր քաղաքներ:

• • •

Հիմնական գոտին ընդգրկում է երկրի Եվրոպական մասը (բացառությամբ հյուսիսի) և ձգվում է Ասիական մասի՝ Սիբիրի և Հեռավոր Արևելքի հարավով: Հյուսիսային գոտին ընդգրկում է երկրի տարածքի ավելի քան 60%–ը, որտեղ բնակավայրերը տարածվում են առավելապես գետերի, ճանապարհների երկայնքով, խոշոր հանքավայրերի և նավահանգիստների հարևանությամբ: Այս գոտու բնակավայրերի բնակչության թիվը անհամեմատ փոքր է նախորդից:

• • •

Ռուսաստանը կազմված է քաղաքական ինքնավարություն ունեցող տարածքներից՝ հանրապետություններից (որոնց թիվը 22 է՝ Կոմի, Կարելիա, Թաթարստան և այլն), որոնք առանձնացվել են ազգային սկզբունքով և ունեն սեփական սահմանադրություն, կառավարություն, խորհրդարան, ազգային խորհրդանիշներ: Վարչատարածքային միավորներից են ինքնավար օկրուգները (4), երկրամասերը (9), մարզերը (46) և մեկ ինքնավար մարզ (Խաբարովսկի երկրամասում Հրեական ինքնավար մարզը): Հետևաբար ՌԴ–ում կան և՛ վարչաքաղաքական, և՛ վարչատարածքային միավորներ:

• • •

Բացարձակ մահացության ցուցանիշը 207 հազար մարդով գերազանցեց բացարձակ ծնելիությանը: 1993 թ.-ից հետո այն անցավ 740 հազարից: Դեպոպուլյացիայի խորացումը պայմանավորված էր նաև ուրբանացման մակարդակի բարձրացմամբ և խոշոր քաղաքների բնակչության թվաքանակի ավելացմամբ: Երկրում բնական աճի ցուցանիշի զգալի ներքին տարբերություններ կան: Բնական աճի բացասական ցուցանիշը առավել բարձր է Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքներում: Ժողովրդագրական այս ճգնաժամը պայմանավորված է մի շարք բարդ գործընթացներով:

• • •

Ռուսաստանի բնակչության տեղաբաշխման վրա մեծ է միգրացիայի ազդեցությունը: Դեռևս նախապատերազմյան շրջանից սկսվել էր մարդկանց պլանավորված վերաբնակեցումը դեպի Ուրալ, Սիբիր և Հեռավոր Արևելք, ԽՍՀՄ այլ հանրապետություններ, որտեղ յուրացվում էին նոր հողատարածություններ, հանքավայրեր, կառուցվում էին գործարաններ: 1930-50-ական թվականներին դիտվել են նաև բռնի գաղթեր: Այդ ժամանակահատվածում հարյուրավոր ճամբարներ էին ստեղծվել աքսորվածների համար: Բանտարկվածների մեծ մասը զոհ դարձավ ստալինյան ռեպրեսիաներին:

Եթե XX դարի սկզբին գերակշռում էր գյուղական բնակչությունը, 1950-ական թվականներին գյուղականի և քաղաքայինի բաժինը հավասարվեց:

• • •

Ռուսաստանի կենտրոնական շրջանների հյուսիսում, ի տարբերություն հարավի, գյուղերը մեծ չեն : Հյուսիսային շրջաններին բնորոշ է ցրված կամ ագարակային տարաբնակեցումը: Խոշոր գյուղեր կան հյուսիսային Կովկասում, որոնց մեծ մասը ստանիցաներ են: Գյուղական բնակավայրերի խոշորությունը պայմանավորված է առաջին հերթին բարենպաստ հողակլիմայական պայմաններով: Բացի այդ, **ստանիցաները** հիմնականում ստեղծվել են Կուբանի և Դոնի շրջանների կազակական մարզերի տարածքներում: Հյուսիսային Կովկասում շատ են նաև հիմնականում մահմեդականներով բնակեցված լեռնային փոքր գյուղական բնակավայրերը՝ **աուլները** և **ղշլաղները:**

• • •

Հայերը մեծ դերակատարում ունեն մշակույթի, գիտության, գործարարության, երաժշտության, սպորտի և այլ ոլորտներում: Հայերի թիվը մեծ է խոշոր քաղաքներում: Ռուսաստանում հայերի միավորման, համախմբման (կոնսոլիդացիա) գործում մեծ է «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության դերը: Պաշտոնական տվյալներով՝ հայերի թիվը հասնում է մոտ 3 մլն-ի:

Բարդ է ՌԴ **վարչատարածքային կառուցվածքը**: Այն ստեղծվել է 1917թ., երբ հաստատվեցին խորհրդային կարգեր, իսկ 1922թ. կազմավորվեց ԽՍՀՄ-ը: Այն փլուզվեց 1991թ., և բոլոր հանրապետությունները, այդ թվում Ռուսաստանը, անկախացան:

• • •

Ռուսաստանի բնակչության թվաքանակը 1897-2023թթ. (մլն մարդ):

Տարիներ	1897	1926	1939	1959	1989	1993	2000	2002	2010	2023
Ամբողջ բնակչությունը	67,5	92,7	108,4	117,5	147,4	148,7	144,8	144	142,9	146,4
Քաղաքային	9,9	16,4	36,3	61,6	108,4	108,9	107	105,1	104,6	109,5
Գյուղական	57,6	76,3	72,1	55,9	39	39,8	39	39	38,3	36,9

• • •

Կենտրոնական Ռուսաստանը այն տարածքն է, որտեղ ձևավորվել է ռուս ազգը, որն այստեղ մեծամասնություն է կազմում: Մարդահամարների տվյալների համաձայն՝ Ռուսաստանում ապրում են մոտ 130 ժողովրդի և ազգության ներկայացուցիչներ:

• • •

Ժողովուրդները տարբերվում են ծագմամբ, լեզվով, սովորույթներով, մտածելակերպով, պատմական ավանդույթներով: Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզվախմբերից առավել տարածվածը **սլավոնականն** է, որով խոսում է բնակչության մեծամասնությունը:

ՌԴ բնակչության ավելի քան 3/4-ը կազմում են ռուսները, որոնք հիմնականում ապրում են երկրի եվրոպական մասում, Սիբիրի հարավում և Հեռավոր Արևելքում: Երկրորդ խոշոր ժողովուրդը **թաթարներն** են՝ 5,9 մլն: Թվաքանակով երրորդը ուկրաինացիներն են (4,4 մլն), որոնց հիմնական մասը ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով հեռացել է ՌԴ-ից: Նոր տվյալներ չկան: Ժողովուրդների հիմնական մասը ապրում է իրենց հանրապետությունների սահմաններում, այսինքն էթնիկական և քաղաքական սահմանները համընկնում են:

• • •

Ռուսաստանում առանձնացվում է բնակչության տեղաբաշխման, տարաբնակեցման երկու գլխավոր գոտի, որոնք ձգվում են արևմուտքից արևելք ուղղությամբ: **Հիմնական՝** գլխավոր և **հյուսիսային**, որոնք ձևավորվել են պատմականորեն՝ բնական և սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությամբ: